Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ ԹԻՎ 120-Ա-122-Ա, 125-Ա, 128-Ա, 130-Ա-133-Ա, 137-Ա-142-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 120-Ա, թիվ 121-Ա և թիվ 122-Ա որոշումների նախաբաններում, երկրորդ պարբերության մեջ ավելորդ է գրառվել «Գյումրի քաղաքի Խանջյան 231/297 տնակում բռնկված հրդեհի պատճառով այրվել է Գրիգորյան» բառերը։

Թիվ 125-Ա որոշման 4-րդ, թիվ թիվ 128-Ա, 130-Ա-133-Ա որոշումների 2-րդ կետերում նշված ժամկետները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին։

Թիվ 137-Ա որոշման հղումը ՀՀ հողային օրենսգրքին սխալ է գրառված։

Թիվ 138-Ա որոշման հղումը ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմանը թերի է գրառված։

Թիվ 139-Ա որոշման հղումը ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածին սխալ է գրառված։

Թիվ 140-Ա որոշման հղումը ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածին թերի է գրառված։ Բացի այդ, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 16-ի թիվ 550-Ն որոշումներին կատարված հղումները սխալ են գրառված (Հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մաս)։ Որոշման մեջ նշված չէ քաղաքացի Խնկոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տերյան փողոց 82/1 հասցեի հողամասի չափը։

Թիվ 141-Ա որոշման հղումը ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմանը սխալ է գրառված, բացի այդ, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշումը 6-րդ կետ չունի։

Թիվ թիվ 140-141 որոշումների մեջ բացակայում են սեփականության իրավունքով պատկանող, ընդլայնվող հողամասերի չափերը և հողամասերի դիրքի վերաբերյալ տեղեկությունները։

Թիվ 142-Ա որոշման հղումը ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմանը թերի է գրառված։ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի մասերին հղում կատարելիս նշվում են իրավական ակտի կրճատ անվանումը, կետի, ենթակետի կամ պարբերության համարը։

20.10.2020թ.